ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ
Չինաստանի էներգետիկ քաղաքականության և աշխարհաքաղաքական դերակատարության համադրության առանձնահատկությունները Մերձավոր Արևելքում

ԼՈՒՍԻՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ
Հեռանկարային հետազոտությունների և նախաձեռնությունների կենտրոն

Հոդվածում աշխարհաքաղաքական համատեքստում քննարկվում է Չինաստանի էներգետիկ քաղաքականությունը Մերձավոր Արևելքում: Դիտարկվում են ՉԺՀ-ի էներգետիկ քաղաքականության ձևավորման վրա ազդեցություն ունեցող քաղաքական գործոնները, Չինաստանի և այդ տարածաշրջանի պետությունների էներգետիկ համագործակցության դինամիկան, դրա ազդեցությունը միջազգային հարթակում այդ պետությունների քաղաքական համագործակցության վրա, ինչպես նաև վերոնշյալի ազդեցությունը Չինաստանի ու Ռուսաստանի էներգետիկ համագործակցության և Չինաստանի ու ԱՄՆ-ի փոխհարաբերությունների վրա: Բացահայտվում է, որ Չինաստանի էներգետիկ համագործակցության նպատակը սոսկ էներգետիկ հսկայական պահանջների բավարարումը չէ: Չինաստանի էներգետիկ քաղաքականության ձևավորման վրա տնտեսական շահերի հետ մեկտեղ ազդում են բազմաթիվ աշխարհա-քաղաքական գործոններ, և պետության էներգետիկ պահանջները բավարարելուն զուգահեռ՝ Չինաստանը, օգտվելով տարածաշրջանում ԱՄՆ-ի ազդեցության թուլացումից, էներգետիկ համագործակցության, ներդրումների և տնտեսական նախաձեռնությունների միջոցով նաև աստիճանաբար մեծացնում է սեփական ազդեցությունը տարածաշրջանի պետություններում:

Բանալի բառեր
Չինաստան, ԱՄՆ, Ռուսաստան, Մերձավոր Արևելք, էներգետիկ քաղաքականություն, աշխարհաքաղաքականություն

Նախաբան

Սի Ծինփինի՝ ՉԺՀ նախագահ նշանակվելուց ի վեր երկիրը «Ցածր պրոֆիլի» քաղաքականությունից սահուն անցավ «Նվաճումների ձգտելու» քաղաքականությանը, որն աշխարհին ազդարարեց

Չինաստանի՝ համաշխարհային գերտերություն դառնալու նպատակի մասին[1]: Տարածաշրջանային նախագծերը լրացնելու եկան համաշխարհային ընդգրկում ունեցող ծրագրեր, որոնք առավելապես հիմնված են տնտեսական համագործակցության խթանման, բարիդրացիական հարաբերությունների հաստատման և միմյանց տարածքային ամբողջականության հարգման վրա: Չինաստանի ազդեցության շրջանակները սկսեցին աստիճանաբար ընդլայնվել՝ ընդգրկելով նաև մինչ այդ վերջինիս համար ոչ այնքան մեծ հետաքրքրություն ներկայացնող Մերձավոր Արևելքի (ՄԱ) պետությունները, որտեղ համագործակցության հիմնական ուղղություններից բացի, յուրահատուկ նշանակություն ստացավ էներգետիկ համագործակցությունը: Վերոնշյալը այդ պետություններում Չինաստանի և ԱՄՆ-ի միջև առաջացրեց շահերի բախում՝ աստիճանաբար ավելի լարելով պետությունների հարաբերությունները, ինչպես նաև սկսեց ազդեցություն ունենալ Չինաստան-Ռուսաստան էներգետիկ համագործակցության վրա:

Չինաստանի էներգետիկ քաղաքականության միակ շարժիչ ուժը էներգետիկ պահանջների բավարարումը չէ. Չինաստանը ներկրում է հսկայական ծավալների գազ և չմշակված նավթ, թեև հարուստ է ածխի պաշարներով, որոնք կարող են պետության էներգետիկ պահանջները լիովին բավարարել ավելի քան մեկ դար: Հետևաբար Չինաստանի արտաքին և էներգետիկ քաղաքականությունները, ինչպես նաև չմշակված նավթի և գազի ներկրումը պայմանավորված են նաև քիմիական աղտոտմանը, փոխադրումների հարմարավետությանը, արդյունաբերական վերամշակմանը և ռազմավարական պաշարների ապահովմանը վերաբերող հաշվարկներով և նկատառումներով[2]:

ՄԱ տարածաշրջանում Չինաստանի էներգետիկ քաղաքականության և աշխարհաքաղաքական դերակատարության համադրության առանձնահատկությունները բացահայտելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել՝

[1] **Yan X.,** From Keeping a Low Profile to Striving for Achievement, *The Chinese Journal of International Politics*, 2014, **7**, 2, 153-154.
[2] **Burgos S., Ear S.,** The Geopolitics of China's Global Resources Quest, *Geopolitics,* 2012, **17,** 1, 47-79.

- Չինաստանի ներկայության դինամիկան Մերձավոր Արևելքում;
- տարիների ընթացքում այլ երկրներից Չինաստան գազի և չմշակված նավթի ներկրման ծավալների դինամիկան և դրանց աշխարհաքաղաքական կարևորությունը;
- տարածաշրջանում Չինաստանի և ԱՄՆ-ի շահերի բախումը;
- ՄԱ պետությունների հետ էներգետիկ համագործակցության խորացման ազդեցությունը Ռուսաստանի և Չինաստանի փոխհարաբերությունների վրա:

Չինաստանի ներկայությունը Մերձավոր Արևելքում

Չինաստանը առանձնահատուկ հետաքրքրություն չուներ ՄԱ պետությունների նկատմամբ և պասիվ քաղաքականություն էր վարում տարածաշրջանում մինչ 2011 թվականը, երբ սկսվեց «Արաբական գարունը»: Այդ շրջանում Չինաստանը Լիբիայում սկսված քաղաքացիական պատերազմի պատճառով երկրից էվակուացրեց իր 40,000 քաղաքացիների, և դա դարձավ Չինաստանի առավել ակտիվ քաղաքականության սկիզբը, որը դրսևորվեց բարձրաստիճան պաշտոնյաների հանդիպումներով, բազմաթիվ տարաբնույթ համաձայնագրերի կնքումով և հսկայածավալ ներդրումներով:

2013 թվականը նշանակալի էր Չինաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթությունների փոփոխության առումով՝ մեկնարկեց «Գոտի և ճանապարհ» չինական նախաձեռնությունը, որի միջոցով Չինաստանը կարողացավ կապեր հաստատել եվրասիական տարածաշրջանի և Հնդկական օվկիանոսի շրջանի պետությունների հետ: ՄԱ տարածաշրջանի նշանակությունը «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում արտացոլված է հետևյալ պետական փաստաթղթերում՝ «Մետաքսի ճանապարհ տնտեսական գոտու և 21-րդ դարի ծովային Մետաքսի ճանապարհի համատեղ կառուցման մասին տեսլականը և գործողությունները» և «Չինաստանի արաբական քաղաքականության փաստաթուղթը»[3]: Այդ նախաձեռնու-

[3] **Fulton J.,** China's challenge to US dominance in the Middle East, China's Great Game in the Middle East: Policy Brief, European Council on Foreign Relations, 2019, pp. 10-17.

թյունը պարզապես Չինաստանի տնտեսական շահերից բխող ռազմավարություն չէ: Ըստ չինական պաշտոնական աղբյուրների՝ նախաձեռնությունը նոր շուկաներ մուտք գործելու, արտահանման ծավալները մեծացնելու, նոր աշխատատեղեր ստեղծելու, տարածաշրջանային անհավասարությունները նվազեցնելու միջոց է, ինչպես նաև ճանապարհ է դեպի քաղաքական կայունություն, անվտանգություն և բարգավաճում, և ի վերջո, միտված է վերականգնելու Չինաստանի ազդեցությունը Եվրասիայում և դրանից դուրս[4]:

Նախաձեռնությունը նաև ուղեկցվում է տարածաշրջանային առանձին նախագծերի իրականացմամբ, որոնց մեջ ներառված պետությունների և Չինաստանի հարաբերությունները ավելի են խորանալու՝ հանգեցնելով տնտեսական փոխշաղկապվածության: Վերջինս նշանակում է, որ փոխադարձ համագործակցություն և զարգացում հնարավոր է միայն նախ և առաջ խաղաղ և անվտանգ միջավայր ձևավորելու դեպքում, սակայն Մերձավոր Արևելքի պարագայում տարածաշրջանում իրավիճակը դեռևս բավական անկայուն է: Եթե ստեղծված իրավիճակում Միացյալ Նահանգներն է տարածաշրջանում հիմնականում ծառայել որպես խաղաղության և անվտանգության հովանավոր, ապա այժմ տարածաշրջանում ավելացել է ևս մեկ մասնակից՝ Չինաստանը, որի անմիջական շահերից է բխում տարածաշրջանում խաղաղության հաստատումը, սակայն Չինաստանի մոտեցումն այս հարցին բավական տարբերվում է Միացյալ Նահանգների մոտեցումից:

Պատահական չէ, որ «Մետաքսի ճանապարհ տնտեսական գոտու և 21-րդ դարի ծովային Մետաքսի ճանապարհի համատեղ կառուցման մասին տեսլականը և գործողությունները» փաստաթղթում Մետաքսի ճանապարհի վերականգնման անհրաժեշտությունը և կարևորությունը հիմնավորվում է «համաշխարհային տնտեսության վերականգնման ցածր մակարդակով, ինչպես նաև միջազգային և տարածաշրջանային բարդ իրավիճակներով», հետևաբար «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության իրականացումը «կարող է խթանել

[4] **Umbach F., Yu K.,** China's Expanding OverseasCoal Power Industry: New Strategic Opportunities, Commercial Risks, Climate Challenges and Geopolitical Implications, EUCERS-Strategy Paper No. 11, 2016, pp. 1-64.

ներառված պետությունների տնտեսական բարգավաճումը, տարածաշրջանային տնտեսական համագործակցությունը, ընդլայնել տարբեր քաղաքակրթությունների միջև փոխանակումները, ինչպես նաև խթանել համաշխարհային խաղաղությունը և զարգացումը»: Այս փաստաթղթում Մերձավոր Արևելքի հետ համագործակցությանը նվիրված առանձին բաժին չկա, սակայն հինգ առաջնահերթություններ են առանձնացվում՝ նախաձեռնությունում ներառված բոլոր պետությունների հետ համագործակցությունը կարգավորելու համար: Դրանք են՝ քաղաքական կոորդինացում, ենթակառուցվածքների միասնականություն, անխափան առևտուր, ֆինանսական ինտեգրում և ժողովուրդների միջև կապեր[5]:

Վերոնշյալ փաստաթղթում անվտանգության և ռազմական համագործակցության մասին բաժինների բացակայությունը վկայում է, որ «Գոտի և ճանապարհ» նախաձեռնությունը կենտրոնանում է զարգացման վրա և չի հանդիսանում աշխարհաքաղաքական ռազմավարության մաս, սակայն այնուամենայնիվ այս փաստաթղթում նշված առաջնահերթությունները հաջողությամբ ուրվագծում են Չինաստանի և ՄԱ պետությունների փոխհարաբերությունների զարգացումը գալիք տարիների ընթացքում[6]:

«Մետաքսի ճանապարհ տնտեսական գոտու և 21-րդ դարի ծովային Մետաքսի ճանապարհի համատեղ կառուցման մասին տեսլականը և գործողությունները» փաստաթուղթը նկարագրում է ներառված պետությունների՝ այդ թվում և ՄԱ պետությունների հետ Չինաստանի հարաբերությունների զարգացման հեռանկարները, և ամբողջովին հիմնված է տնտեսական և մշակութային համագործակցության խթանման վրա և չի ներառում անվտանգության և ռազմական համագործակցության մասին դրույթներ: Վերոնշյալը հատկանշական է չինական արտաքին քաղաքականությանը, երբ տնտեսական

[5] Vision and Actions on Jointly Building Silk Road Economic Belt and 21st-Century Maritime Silk Road, National Development and Reform Commission, Ministry of Foreign Affairs, and Ministry of Commerce of the People's Republic of China, with State Council authorization, First Edition, 2015, https://reconasia-production.s3.amazonaws.com/media/filer_public/e0/22/e0228017-7463-46fc-9094-0465a6f1ca23/vision_and_actions_on_jointly_building_silk_road_economic_belt_and_21st-century_maritime_silk_road.pdf, (20.08.2020).

[6] **Fulton J.,** նշվ. աշխ.

համագործակցության խորացումը աստիճանաբար, սահուն կերպով հանգեցնում է անվտանգության և ռազմական համագործակցության խորացման անհրաժեշտությանը, քանի որ հետագայում անհրաժեշտ է լինում անվտանգ միջավայր ապահովել մեծածավալ ներդրումները չկորցնելու համար։

Ինչպես նախորդ փաստաթղթում, այնպես էլ «Չինաստանի արաբական քաղաքականության» փաստաթղթում առանձին նշվում է Չինաստանի արտաքին քաղաքականության հիմք հանդիսացող Խաղաղ համակեցության հինգ սկզբունքների մասին (փոխադարձ հարգանք միմյանց ինքնիշխանության և տարածքային ամբողջականության նկատմամբ, փոխադարձ ագրեսիվության բացակայություն, միմյանց ներքին գործերին միջամտության բացակայություն, հավասարություն և փոխշահավետություն, խաղաղ համակեցություն), բայց այս փաստաթուղթն արժեքավոր է նրանով, որ այդտեղ նկարագրվում են Չինաստանի և ՄԱ պետությունների միջև համագործակցության առաջնահերթությունները։ Չինաստանը և արաբական երկրներն ընդունում են համագործակցության «1+2+3» ձևաչափը, որի համաձայն՝ 1-ը ներկայացնում է հիմնական հետաքրքրություն համարվող էներգետիկական համագործակցությունը, 2-ը՝ ենթակառուցվածքների ստեղծումը, առևտուրը և ներդրումները, 3-ը՝ ատոմային էներգիան, տիեզերական արբանյակները, բարձրագույն տեխնոլոգիաները և էներգիայի նոր աղբյուրները[7]։ Չինաստանը դարձել է տարածաշրջանում առաջատար ներդրողը։ Մասնավորապես, 2018թ. 20 միլիարդ ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ վարկեր է տրամադրել Արաբական աշխարհին՝ վերակառուցման համար, 3 միլիարդ ԱՄՆ դոլար՝ բանկային ոլորտի զարգացման համար և ակտիվորեն աջակցում է տարածաշրջանում այլընտրանքային կանաչ էներգետիկ ռեսուրսների որոնման գործընթացներին[8]։

---

[7] China's Arab Policy Paper, The State Council, The People’s Republic of China, 2016, http://english.www.gov.cn/archive/publications/2016/01/13/content_281475271412746.htm, (27.11.2019).

[8] **Elnaggar Y**., China’s growing role in the Middle East, Middle East Institute, 2020, https://www.mei.edu/publications/chinas-growing-role-middle-east, (28.08.2020).

Մերձավոր Արևելքի երկրների նկատմամբ Չինաստանի քաղաքականության փոփոխությունը պատահական չէ: Այստեղ Չինաստանի համար առաջնային է տնտեսական համագործակցությունը, հատկապես՝ էներգետիկայի ոլորտում, ինչպես նաև տարածաշրջանի կայունացումը՝ ներդրումները չկորցնելու նպատակով: Օրեցօր զարգացող չինական տնտեսության համար էնեգիայի աղբյուրների բազմազանություն ապահովելը բավական կարևոր է, քանի որ մեկ կամ մի քանի պետություններից էներգետիկ կախվածությունը բացասական ազդեցություն կարող է ունենալ Չինաստանի վրա: Դա է պատճառը, որ Չինաստանը փորձում է փոխշահավետ հարաբերություններ հաստատել նաև ՄԱ պետությունների հետ և հնարավորինս խուսափել տարածաշրջանային խնդիրներում ներգրավվելուց:

Չինաստանի և ՄԱ պետությունների էներգետիկ համագործակցության և աշխարհաքաղաքական շահերի համադրման առանձնահատկությունները

Էներգետիկ պաշարների սակավությունը սպառնալիք է Չինաստանի տնտեսության համար, քանի որ կայուն աճի շարունակականությունը պայմանավորված է էներգետիկ պահանջների բավարարմամբ: Վերոնշյալ հանգամանքից ելնելով՝ Չինաստանը ՄԱ տարածաշրջանում էներգետիկ քաղաքականությունը ձևավորելիս, դիտարկել է երկու գործոն՝ էներգետիկ պահանջների բավարարման անհրաժեշտությունը և աշխարհաքաղաքական շահերը տարածաշրջանում: Պեկինը, նաև հաշվի առնելով էներգետիկ համագործակցության և աշխարհաքաղաքական շահերի առանձնահատկությունները, մշակել է էներգիայի ապահովման եռաբաղադրիչ ռազմավարություն[9]՝

1. Նոր որոնումների և արդյունահանման միջոցով բարելավել էներգետիկ ռեսուրսների ներքին մատակարարումը երկրում;

[9] **Farizal Mohd Razalli**, China's Foreign Energy Quest and the Changing Security Dynamics in ASEAN, Asian Conflicts Reports, Issue 11 (Alexandria, VA: Council for Asian Transnational Threat Research, June 2010) p. 1.

2. Ռեսուրսների բաշխման և փոխադրման երկկողմանի և բազմակողմանի պայմանավորվածությունների միջոցով ապահովել էներգետիկ ռեսուրսների արտաքին մատակարարումը;
3. Բազմազանեցնել էներգետիկ ռեսուրսների մատակարարման աղբյուրները և դրանք ներկրել աշխարհի հնարավորինս շատ տարածաշրջաններից:

Չինաստանի տնտեսության կախվածությունը չմշակված նավթի և գազի ներկրումից տարեցտարի աճում է: Այդ նպատակով ՉԺՀ-ը հսկայական գումարներ է ծախսում Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի տարածաշրջանում ենթակառուցվածքների կառուցման աշխատանքների մեջ ներգրավվելու վրա: 2018 թվականի ամռանը՝ Պեկինում կայացած Չինաստան-Արաբական պետություններ համագործակցության ֆորումի ժամանակ, Չինաստանը խոստացավ 23 միլիարդ ԱՄՆ դոլարի վարկեր և օգնություն տրամադրել տարածաշրջանին: Արդյունքում՝ ԱՄԷ-ի Խալիֆա նավահանգիստը, Օմանի Դուքմը, Սաուդյան Արաբիայի Ջիզանը, Եգիպտոսի Պորտ Սաիդը և Ին Սոխնը դիտարկվեցին որպես հիմնական նախագծեր, որոնք Չինաստանը պետք է իրականացներ Մերձավոր Արևելքում «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում[10]:

Քաղաքականության փոփոխությունը ազդեց ներկրվող էներգակիրների ոչ միայն ծավալների, այլև դրանք արտահանող երկրների միջև այդ ծավալների բաշխվածության վրա:

2019 թվականին ՉԺՀ-ը ներկրել է 238.7 միլիարդ ԱՄՆ դոլար արժողությամբ չմշակված նավթ, ինչը 77.7%-ով ավելի է, քան 2015 թվականի ցուցանիշը: Մի քանի պետություններից էներգետիկ կախվածություն ունենալուց խուսափելու համար՝ Չինաստանը հնարավորինս փորձում է բազմազանեցնել չմշակված նավթի

[10] Oil and gas projects led by Chinese contractors in the Middle East region stand at US$75.3bn, Global Data, 2019, https://www.globaldata.com/oil-and-gas-projects-led-by-chinese-contractors-in-the-middle-east-stand-at-us75-3bn/, (29.08.2020).

ներկրման աղբյուրները։ 2019 թվականին Չինաստանը ներկրված չմշակված նավթի 90,1%-ը ներկրել է հետևյալ պետություններից[11]՝

- Սաուդյան Արաբիա՝ 40.1 միլիարդ ԱՄՆ դոլար (16,8%),
- Ռուսաստան՝ 36,5 միլիարդ դոլար (15,3%),
- Իրաք՝ 23,7 միլիարդ դոլար (9,9%),
- Անգոլա՝ 22,7 միլիարդ դոլար (9,5%),
- Բրազիլիա՝ 18,5 միլիարդ դոլար (7,8 տոկոս),
- Օման՝ 16,4 միլիարդ դոլար (6,9%),
- Քուվեյթ՝ 10,8 միլիարդ դոլար (4,5%),
- Արաբական Միացյալ Էմիրություններ՝ 7.3 միլիարդ դոլար (3.1%),
- Իրան՝ 7.1 միլիարդ դոլար (3%),
- Միացյալ Թագավորություն՝ 6,3 միլիարդ դոլար (2,7%),
- Կոնգո՝ 5,54 միլիարդ դոլար (2,3%),
- Մալայզիա՝ 5,5 միլիարդ դոլար (2,3 տոկոս),
- Կոլումբիա՝ 5,4 միլիարդ դոլար (2,3 տոկոս),
- Լիբիա՝ 4,8 միլիարդ դոլար (2%),
- Վենեսուելա՝ 4,4 միլիարդ դոլար (1,9%)։

Ընդ որում, 2018 թվականի համեմատությամբ 2019թ. ներկրման ծավալները որոշ պետությունների դեպքում աճել են, մյուսների դեպքում՝ նվազել։ Հատկանշական է 2019 թվականին Սաուդյան Արաբիայից չմշակված նավթի ներկրման ծավալների աճը, որի շնորհիվ վերջինս առաջ անցավ Ռուսաստանից՝ դառնալով Չինաստանին չմշակված նավթ մատակարարող առաջատար պետությունը[12]՝

- Միացյալ Թագավորություն (2018 թվականի համեմատ աճել է 44.3%-ով),
- Սաուդյան Արաբիա (աճել է 35,1%-ով),
- Բրազիլիա (աճել է 14,3%-ով),
- Մալայզիա (աճել է 13,8%-ով),
- Արաբական Միացյալ Էմիրություններ (աճել է 9,5%-ով),

---

[11] **Workman D.,** Top 15 Crude Oil Suppliers to China, World's Top Exports, http://www.worldstopexports.com/top-15-crude-oil-suppliers-to-china/ (25.088.2020).

[12] **Workman D.,** նույն տեղում։

- Կոլումբիա (աճել է 7,6%-ով),
- Իրաք (աճել է 5,9%-ով),
- Լիբիա (աճել է 0,5%-ով),
- Ռուսաստան (նվազել է 3,7%-ով),
- Օման (նվազել է 5,4%-ով),
- Անգոլա (նվազել է 8,7%-ով),
- Քուվեյթ (նվազել է 9,3%-ով),
- Կոնգո (նվազել է 12.9%-ով),
- Վենեսուելա (նվազել է 36,6%-ով),
- Իրան (նվազել է 52.9%-ով)։

Բերված տվյալները վկայում են, որ չմշակված նավթի գրեթե կեսը Չինաստանը ներկրել է ՄԱ պետություններից։ Սակայն պետությունների միջև էներգետիկ համագործակցությունը չի սահմանափակվում Չինաստանի կողմից նավթի ներմուծմամբ։

Չինաստանը առաջատար ներդրող է Մերձավոր Արևելքում նավթի և գազի մշակման ծրագրերում։ Եթե 2014թ. այդ նախագծերի վրա տարեկան ծախսը կազմել է 13.8 միլիարդ ԱՄՆ դոլար, ապա 2018թ. ցուցանիշը գրեթե կրկնապատկվել է՝ հասնելով 24.9 միլիարդ ԱՄՆ դոլարի։ Չինական ներդրումների աճը պայմանավորված է «Գոտի և ճանապարհ» նախագծով, որի շրջանակներում ներդրումներ են իրականացվում ոչ միայն գազի և նավթի մշակման հետ կապ ունեցող ենթակառուցվածքներում, այլև՝ օդանավակայանների, ճանապարհների, երկաթուղիների, էլեկտրահաղորդման, ջրուղիների, կոյուղիների և ծովային ենթակառուցվածքների շինարարության կամ բարելավման մեջ[13]։

Չինաստանի էներգետիկ պահանջների սպառումը ոչ միայն դարձել է տնտեսության շարունակական աճի հիմնական նախապայման, այլև դարձել է ժամանակակից համաշխարհային քաղաքականության ձևավորման կարևոր գործոն։ Չինաստանի էներգետիկ քաղաքականությունը փոխում է աշխարհաքաղաքականությունն ամբողջ աշխարհում, այն ոչ միայն տնտեսական շահեր է

[13] **Murray J.,** China leads investment for Middle East oil and gas projects worth $75bn, NS Energy, https://www.nsenergybusiness.com/features/china-oil-and-gas-investment/, (26.08.2020).

հետապնդում, այլև՝ քաղաքական և ռազմավարական[14]: Էներգետիկ համագործակցության արդյունքում վերոնշյալ պետությունների և Չինաստանի միջև ոչ միայն տեղի է ունենում էներգետիկ ռեսուրսների առևտուր, այլև Չինաստանի կողմից տարբեր ոլորտներում հսկայածավալ ներդրումներ են իրականացվում: Հետևաբար այս համատեքստում էներգետիկ համագործակցությունը կարող է դիտարկվել որպես Չինաստանի համար միջոց՝ ՄԱ տարածաշրջանում սեփական ներկայությունը և ազդեցությունը մեծացնելու նպատակով, քանի որ չինական նախաձեռնությունների իրականացման համար՝ տարածաշրջան են ժամանում հազարավոր չինացիներ: Այդ ամենին զուգահեռ, էներգետիկ համագործակցության խորացման արդյունքում ՄԱ պետությունները նաև պատրաստակամ են դառնում քաղաքական աջակցություն ցուցաբերել Չինաստանին միջազգային հարթակում, մասնավորապես, Չինաստանի տարածքային ամբողջականությանը վերաբերող խնդիրների առնչությամբ, որոնց անդրադարձ կլինի այս բաժնի հաջորդ հատվածում:

Չինաստանի և արաբական պետությունների համագործակցությունը չի սահմանափակվում «Գոտի և ճանապարհ» նախաձեռնությամբ: Պետությունները համագործակցում են տարբեր ձևաչափերում, որոնցից են Չին-արաբական համագործակցության համաժողովը (ՉԱՀՀ), Պարսից ծոցի արաբական պետությունների համագործակցության խորհուրդը և Չին-աֆրիկյան համագործակցության ֆորումը (ՉԱՀՖ): Ընդ որում ՉԱՀՀ-ն Չինաստանի և Արաբական պետությունների լիգայի համագործակցությունը խթանող նախաձեռնություն է, որը ներառում է համագործակցությունը քաղաքականության, առևտրի և տեխնոլոգիայի ոլորտներում[15]:

«Չինաստանի արաբական քաղաքականության» փաստաթղթում նաև առավել մանրամասն է ներկայացվում Չինաստանի

---

[14] **Marketos T. N.,** *China's Energy Geopolitics: The Shanghai Cooperation Organization and Central Asia (Routledge Contemporary China Series)* (1st ed.), Routledge, 2007, pp. 5-10.

[15] Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Արտաքին Գործերի Նախարարության պաշտոնական կայք, https://www.fmprc.gov.cn/mfa_eng/gjhdq_665435/dqzzywt_665451/2633_665453/, (26.08.2020):

դիրքորոշումը Մերձավոր Արևելքի մի քանի իրողությունների նկատմամբ՝

- Չինաստանն աջակցում է Մերձավոր Արևելքի խաղաղ գործընթացին և Պաղեստինի անկախ պետության ստեղծմանը՝ լիակատար ինքնիշխանությամբ, 1967 թվականի սահմաններով, և ընդունում է Արևելյան Երուսաղեմը՝ որպես մայրաքաղաք: Չինաստանը աջակցում է Արաբական լիգայի և անդամ պետությունների ջանքերին այս հարցում:
- Չինաստանը կողմնակից է տարածաշրջանային թեժ խնդիրների քաղաքական լուծմանը և Մերձավոր Արևելքում միջուկային զենքից և զանգվածային ոչնչացման զենքերից ազատ գոտու ստեղծմանը:
- Չինաստանը աջակցում է արաբական պետությունների՝ միասնության ամրապնդման, ծայրահեղական գաղափարների տարածումը զսպելու և ահաբեկչության դեմ պայքարի ուղղությամբ գործադրած դրական ջանքերին:
- Չինաստանը հարգում է արաբական ժողովրդի կատարած ընտրությունները և աջակցում արաբական պետություններին իրենց ազգային պայմաններին համապատասխանող սեփական ուղիների բացահայտման գործընթացում:
- Չինաստանը հույս ունի մեծացնել արաբական պետությունների հետ կառավարման փորձի փոխանակման մակարդակները:
- Միջազգային հարաբերությունների խոշոր հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են ՄԱԿ-ի բարեփոխումները, կլիմայի փոփոխությունը, սննդի և էներգետիկ անվտանգությունը, երկու կողմերը հարգում են միմյանց հիմնական շահերն ու հիմնական մտահոգությունները, աջակցում են միմյանց հիմնավորված պահանջարկներին և ողջամիտ առաջարկներին, ինչպես նաև կայուն կերպով պաշտպանում զարգացող երկրների ընդհանուր շահերը:[16]

Չինաստանի որդեգրած արտաքին քաղաքականությունը Մերձավոր Արևելքի նկատմամբ հիմնված է համագործակցության և փոխշահավետության վրա՝ ոչ մի գաղափարական ճնշում չի գործա-

[16] China's Arab Policy Paper, նույն տեղում:

դրվում և հարաբերությունները զարգանում են միմյանց մշակութային արժեքների, շահերի, ինչպես նաև դիրքորոշումների նկատմամբ փոխադարձ հարգանքի պայմաններում: Վերջինս հատկանշական է չինական արտաքին քաղաքականությանը ամբողջ աշխարհում՝ դրա հիմքը փափուկ ուժի կիրառման միջոցով փոխադարձ վստահության մթնոլորտի ստեղծումն է, որի շնորհիվ Չինաստանը սկսում է դիտվել որպես առավել գրավիչ գործընկեր:

Պեկինը որդեգրել է «Զգուշավոր վիշապի» քաղաքականությունը տարածաշրջանում, այսինքն ցուցաբերում է տարածաշրջանային մեծ ներգրավվածություն՝ որոշակի սահմանափակումներով: Սա հատկապես արտահայտվում է Պեկինի և Ալ-Ռիադի, ինչպես նաև Թեհրանի հետ հարաբերություններում: Պեկինը զգուշանում է առավել մեծ դիվանագիտական ակտիվություն ցուցաբերելուց, ինչպես նաև տարածաշրջանի անվտանգության ապահովման մեջ ներգրավվելուց, քանի որ վերջինս ոչ միայն նյութական և մարդկային կորուստների կարող է հանգեցնել, այլև Չինաստանի՝ որպես «բոլորի ընկեր և ոչ մեկի թշնամի» հեղինակության կորստին: Դա է պատճառը, որ Պեկինը երբեք չի հայտարարել Մերձավոր Արևելքի նկատմամբ ունեցած որևէ հստակ քաղաքականության մասին[17]:

Չինաստանի քաղաքականությունը տարածաշրջանում զգուշավոր է, քանի որ Պեկինը Մերձավոր Արևելքում նախընտրում է բազմաբևեռ կարգը՝ ձգտելով սեփական քաղաքական ազդեցությունը տարածել այլ հզոր տերությունների հետ մեկտեղ, ինչը իրականացվում է տարածաշրջանային վեճերում միջնորդության միջոցով: Վերջինիս օրինակ է Սիրիական պատերազմի դեպքը, երբ Չինաստանը վետո դրեց Սիրիայի հարցով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նոր բանաձևի վրա, ինչպես նաև անհամաձայնությունները, որոնք հանգեցրեցին 2015 թվականի Իրանական ատոմային գործարքին: Ընդհանուր առմամբ, Չինաստանի և Մերձավոր Արևելքի պետություն-

[17] **Nader A., Scobell A.,** China in the Middle East; The Wary Dragon, RAND Corporation, Santa Monica, 2016, pp. 1-7.

ների հարաբերությունների խորացումը կարող է դիտարկվել որպես քայլ ընդդեմ ԱՄՆ-ի գերիշխանությանը տարածաշրջանում[18]:

Պեկինի զգուշավորությունը պայմանավորված է տարածաշրջանային հակամարտությունների մեջ ներքաշվել չցանկանալով և միմյանց ներքին գործերին չխառնվելու սկզբունքով, սակայն անհրաժեշտության դեպքում Չինաստանը պատրաստ է առավել ակտիվ քաղաքականություն վարել տարածաշրջանում: Հիմնվելով չմիջամտության հայեցակարգի կարևորության վրա՝ Չինաստանը որևէ գաղափարական ճնշում չի գործադրում ՄԱ պետությունների վրա՝ տարբերվելով ԱՄՆ-ից: Դրա շնորհիվ տարածաշրջանի պետությունները հիմնականում դրական են արձագանքում հարաբերությունների խորացման ուղղությամբ Չինաստանի փորձերին:

«Գոտի և ճանապարհ» նախագծի մեկնարկից հետո պարզ դարձավ, որ Չինաստանի հետաքրքրությունը ՄԱ պետությունների նկատմամբ աճել է և քայլեր են ձեռնարկվում տարածաշրջանում Չինաստանի ազդեցության տարածման ուղղությամբ: Քանի որ տարածաշրջանը յուրահատուկ է բնական ռեսուրսների հարստությամբ, ինչպես նաև աշխարհագրական դիրքով, Չինաստանը հետաքրքրությունների բավական լայն շրջանակ ունի տարածաշրջանում: Այնտեղ սեփական շահերը պաշտպանելու և հետաքրքրությունների բավարարման հասնելու համար Չինաստանը դիմում է չորս միջոցների՝ միջնորդություն, ՄԱ ազդեցիկ պետությունների հետ քաղաքական համագործակցության խորացում, խաղաղապահների տեղակայում և տնտեսական (հատկապես էներգետիկ) համագործակցության խորացում: Պեկինի հետաքրքրությունները տարածաշրջանում բազմավեկտոր են[19]՝

- Այլ ազդեցիկ տերությունների հետ լավ հարաբերություններ ունենալու միջոցով սեփական քաղաքական ազդեցության մեծացում, որի շնորհիվ տարածքային վեճերի դեպքում տարածաշրջանի երկրները աջակցություն կցուցաբերեն Չինաստանին: Օրինակ՝ 2016 թվականին, երբ Հարավչինական ծովում տարածքային

[18] **Sun D.**, China's approach to the Middle East: Development before democracy, China's Great Game in the Middle East: Policy Brief, European Council on Foreign Relations, 2019, pp. 17-25.
[19] **Sun D**., նույն տեղում:

վեճը ինտենսիվացավ, Արաբական լիգան Դոհայի հռչակագրի միջոցով աջակցություն ցուցաբերեց Չինաստանին: Հետագայում, երբ Հաագայի արբիտրաժային տրիբունալի դատավորները մերժեցին Հարավչինական ծովում Չինաստանի տարածքային հավակնությունները, արաբական 22 պետությունների աջակցությունն օգնեց ՉԺՀ-ին հաղթահարելու միջազգային մեկուսացումը:

- Պետության ինքնիշխանության և տարածքային ամբողջականության հայեցակարգի տարածում Մերձավոր Արևելքում՝ այդ նորմերի միջազգային ավելի լայն պահպանում ապահովելու համար: Դրա շնորհիվ, երբ 2019 թվականի հուլիսին Արևմուտքը քննադատեց Չինաստանին Սինծյանում մուսուլման փոքրամասնություն կազմող ույղուրների համար մասնագիտական կրթության և ուսուցման կենտրոններ հիմնելու համար, Իրանը, Սաուդյան Արաբիան, Քուվեյթը և Մերձավոր Արևելքի որոշ այլ երկրներ արդարացրեցին Չինաստանի գործողությունները:
- Առևտրային կապերի խորացում, որը ներառում է էներգետիկան, առևտրային համագործակցությունը և ներդրումները: Համաձայն Չինաստանի մաքսային գլխավոր վարչության տվյալների՝ 2018 թվականին ներկրվել է 462 միլիոն տոննա նավթ, որի գրեթե կեսը՝ Մերձավոր Արևելքի պետություններից, ինչի արդյունքում ՉԺՀ-ը դարձել է 11 ՄԱ պետությունների (ներառյալ Իրանը) ամենամեծ առևտրային գործընկերը:

Հատկանշական է, որ միջազգային հարթակում Չինաստանին քաղաքական աջակցություն ցուցաբերող պետությունները հիմնականում ՄԱ տարածաշրջանի այն պետություններն են, որոնք Չինաստանին մատակարարում են էներգետիկ ռեսուրսներ՝ հիմնականում չմշակված նավթ և գազ: Չինաստանը փորձում է որքան հնարավոր է բարենպաստ պայմաններ ստեղծել տարածաշրջանում փոխշահավետ հարաբերություններ ձևավորելու համար և բոլոր խնդիրների համար առաջարկել այնպիսի լուծում, որն ընդունելի կլինի բոլոր ներգրավված կողմերի համար: Այդուհանդերձ, Չինաստանի գլխավոր հետարքրությունը վերոնշյալ ամենավերջին կետն է, և հիմնականում տնտեսական կապերի կայունությունը և ներդրումների

անվտանգությունը ապահովելու համար է Պեկինը անհրաժեշտության դեպքում ակտիվ քաղաքականություն վարում:

«Գոտի և ճանապարհ» նախագծի մեկնարկից ի վեր Պեկինը սկսել է դիտարկել Արաբական աշխարհը որպես ռազմավարական մեծ կարևորություն ունեցող տարածաշրջան՝ միջազգային շուկաների հետ ունեցած կայուն կապերի և նավթի հսկայական պաշարների շնորհիվ: Դա է պատճառը, որ ՄԱ տարածաշրջանում Չինատանը հիմնականում օգտագործում է *չինական իսլամական փափուկ ուժը*: Վերջինս ոչ միայն ներառում է գիտելիքների փոխանակման տարբեր հարթակների ստեղծումը պետությունների միջև, բարձրաստիճան պաշտոնյաների հանդիպումները, ՉԺՀ քաղաքացիներից բաղկացած պաշտոնական պատվիրակությունների ուխտագնացությունները դեպի արաբական պետություններ (հաջի դիվանագիտություն) և իսլամական կրոնական միջոցառումների կազմակերպումը Չինաստանում մահմեդական փոքրամասնության համար, այլև արաբական լրատվամիջոցների օգտագործումը Չինաստանի հեղինակության բարձրացման նպատակով և մահմեդականության չինականացումը (չինական ճարտարապետական ոճով կառուցված մզկիթներ, չինական սոցիալիստական արժեքների քարոզում և այլն): Վերոնշյալում հատկապես նշանակալի է Չինաստանի իսլամական ասոցիացիայի գործունեությունը[20]:

Չինաստանի իսլամական ասոցիացիայի գործունեության, հաջի դիվանագիտության և չինական իսլամական փափուկ ուժի շնորհիվ Չինաստանը կարողացավ ստանալ Արաբական պետությունների աջակցությունը ույղուրների նկատմամբ իրականացվող քաղաքականության առնչությամբ[21]: Ըստ մահմեդական մեծամասնություն ունեցող պետությունների մեկնաբանությունների[22] և չինական[23] աղբյուրների՝

[20] **Greer L., Jardine B.,** The Chinese Islamic Association in the Arab World: The Use of Islamic Soft Power in Promoting Silence on Xinjiang, Middle East Institute, https://www.mei.edu/publications/chinese-islamic-association-arab-world-use-islamic-soft-power-promoting-silence, (28.08.2020).

[21] *Spotlight: Ambassadors from 37 countries issue joint letter to support China on its human rights achievements - Xinhua | English.news.cn*. (2019, July 13). Xinhua Net. http://www.xinhuanet.com/english/2019-07/13/c_138222183.htm

[22] **Hashemi A.,** How Come Islamic Countries are Silent about China's Crackdown on, *Iran International, 2019,* https://iranintl.com/en/world/how-come-islamic-countries-are-silent-about-china%E2%80%99s-crackdown-muslims, (29.08.2020);

Սինծյան նահանգի մասնագիտական կրթության և ուսուցման կենտրոններում ոչ բարենպաստ պայմաններում ապրող և գրագիտության շատ ցածր մակարդակ ունեցող ույղուրները հնարավորություն են ստանում սովորել չինարեն լեզուն և ստանալ որոշ հմտություններ, որոնք կօգնեն վերջիններիս աշխատանք գտնել և արժանավայել կյանքով ապրել Չինաստանում. ույղուրները հիմնականում հրաժարվում են չինարեն սովորել և իրենց երեխաներին ուղարկել դպրոց, նաև լայն տարածում ունեն վաղ ամուսնությունները: Այդ նախաձեռնությունը նաև միտված է պայքարելու անջատողական տրամադրությունների և ահաբեկչական գործողությունների դեմ Սինծյան նահանգում: Ավելին, Չինաստանի իսլամական ասոցիացիան Սինծյան նահանգի «կեղծ խռովությունները» որակել է որպես իսլամական ոգուն դեմ հանցավոր գործողություններ, որոնք չեն կարող ներվել[24]:

Չինաստանը Մերձավոր Արևելքում միշտ փորձել է վարել զգուշավոր և պասիվ քաղաքականություն, սակայն «Արաբական գարունը» ստիպեց ՉԺՀ-ին փոխել մոտեցումը: Աշխարհաքաղաքական դերակատարության ազդեցության ամրապնդման և մեծացման նպատակով Չինաստանն աստիճանաբար ընդլայնեց իր էներգետիկ աղբյուրները՝ ընդգրկելով որքան հնարավոր է շատ ՄԱ պետություններ:

«Արաբական գարունը» սրեց տարածաշրջանում չին-ամերիկյան ռազմավարական մրցակցությունը: Թունիսի և Եգիպտոսի դեպքում, Պեկինը շարունակում էր գործել տարածքային ամբողջա-կանության, ինքնիշխանության և չմիջամտության ավանդական հայեցակարգի հիման վրա: Իսլամիստների իշխանության գալուց հետո

Saudi newspaper prints full-page denial of China's Uighur persecution, *The New Arab,* 2020, https://english.alaraby.co.uk/english/news/2020/7/12/saudi-newspaper-prints-full-page-denial-of-chinas-uighur-persecution, (29.08.2020)

[23] **Mu L.,** *Vocational education and training centers in Xinjiang represents new path to address terrorism,* People's Daily Online,2019, http://en.people.cn/n3/2019/0910/c90000-9613730.html, (29.08.2020).

[24] "الصينية الإسلامية الجمعية: احداث 5// يوليو// الاساسية الاسلامية الروح تخالف شديدة مخالفة" ["China Islamic Association: The Events of 'July 5' Violate the Fundamental Islamic Spirit Very Violently"], The People's Daily Arabic, July 8, 2009, http://arabic.people.com.cn/31664/6695898.html. (25.08.2020).

Պեկինը կարողացավ եգիպտա-ամերիկյան հարաբերություններում լարվածությունը և եգիպտական նոր կառավարության արտաքին քաղաքականության վերանայման ձգտումներն օգտագործել չին-եգիպտական հարաբերությունների ամրապնդման և տարածաշրջանում ազդեցության ընդլայնման նպատակով[25]:

«Լիբիական գարնան» ընթացքում պարզ դարձավ, որ այդ հայեցակարգի հետագա կիրառումը արդյունավետ չի լինի, և Պեկինն իր տարածաշրջանային շահերի պաշտպանության նպատակով ակտիվ միջնորդական առաքելություն ստանձնեց՝ հիմնարար փոփոխություն մտցնելով տասնամյակներ կիրառված արտաքին քաղաքական հայեցակարգում: Սիրիական զարգացումների ընթացքում Չինաստանի արտաքին քաղաքական նոր դերակատարությունն՝ իբրև միջազգային հարաբերությունների հիմնարար նորմերի պաշտպանությամբ հանդես եկող և գլոբալ կառավարման գործերին մասնակցող ու պատասխանատվություն ստանձնող տերություն, ցույց տվեց, որ Լիբիայի իրադարձությունների հետ կապված Պեկինի արտաքին քաղաքականության նոր դրսևորումները ոչ թե վերաբերում են մասնավոր դեպքի, այլ հայեցակարգային նոր մոտեցումների կիրառման հետևանք են: Այդ մոտեցումների շրջանակներում տնտեսական անվտանգության և ներդրումային շահերի ապահովման նպատակով Պեկինը նաև խորացրեց համագործակցությունը Ծոցի համեմատաբար կայուն երկրների հետ՝ հակածովահենային գործողություններ վարելու հիմնավորմամբ ապահովելով չինական ռազմածովային ուժերի ներկայությունն Ադենի ծոցում, ինչպես նաև Հնդկական օվկիանոսում[26]:

Չնայած քաղաքական լարվածությանը և ծագած մարտահրավերներին, Պեկինը կարողացավ հարմարվել իրավիճակին՝ ավելի խորացնելով հարաբերությունները վերոնշյալ պետությունների հետ,

---

[25] **Հարությունյան Ա.,** «Արաբական գարունը» իբրև նոր մարտահ.րավեր և նոր հնարավորություն Չինաստանի մերձավորարևելյան քաղաքականության համար, *Հայկական Քաղաքագիտական Հանդես* 1(1), 2014, էջ 93-121:

[26] **Հարությունյան Ա.**, նույն տեղում:

սակայն այնուամենայնիվ չհաջողվեց լուծում գտնել բոլոր մարտահրավերների համար։

Մերձավոր Արևելքում քաղաքական իրավիճակի անկայունությունն ընդհանուր առմամբ մեծ ազդեցություն չի ունեցել Չինաստանի և տարածաշրջանի երկրների փոխշահավետ հարաբերությունների և տնտեսական համագործակցության վրա, և տարածաշրջանում դեռևս արդիական է «Հայացք արևելքից» քաղաքական ուղղվածությունը, սակայն վերոնշյալի պատճառով Պեկինի քաղաքականությունը բախվել է որոշ մարտահրավերների[27]՝

1. Մերձավոր Արևելքում արձանագրված ընդվզումները կարող են տարածվել և Չինաստանի արևմուտքում անհանգստությունների պատճառ դառնալ՝ կապված մուսուլմանական փոքրամասնությունների հետ։

2. ՉԺՀ-ի կախվածությունը մերձավորարևելյան չմշակված նավթից տարեցտարի աճում է։ Հետագայում նավթի պաշարների սղությունը կարող է լուրջ հետևանքներ ունենալ Չինաստանի տնտեսական անվտանգության և կայուն զարգացման վրա։

3. Մարդասիրական միջամտության համատեքստում Վաշինգտոնի մշակած «Լիբիական մոդելը» հնարավոր է ԱՄՆ-ի կողմից կրկին օգտագործվի այլ տարածաշրջաններում և նույնիսկ Չինաստանում, ինչը մարտահրավեր է վերջինիս չմիջամտության քաղաքականության համար։

4. Ծայրահեղական շարժումների ուժգնացումը հնարավոր է ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանգեցնի Չինաստանում ծայրահեղական և անջատողական ուժերի ակտիվացմանը։ Հատկապես դա վերաբերում է թուրքական «Արևելյան Թուրքիստան» կազմակերպության ակտիվացմանը։

5. Տարածաշրջանի երկրներն անվտանգության և պաշտպանության առումով մեծ կախվածություն ունեն ԱՄՆ-ից, ինչը դժվարացնում է Չինաստանի առաջխաղացումը տարածաշրջանում։

Չինաստանի հետաքրքրությունը Մերձավոր Արեելքի նկատմամբ տարեցտարի աճում է, ինչն արտահայտվում է

[27] **Kuangyi Y.,** The Upheaval in the Middle East and China's Middle East Policy, Journal *of Middle Eastern and Islamic Studies (in Asia),* 2012, **6,** 3, 19-26.

տարածաշրջանում ՉԺՀ քաղաքականության ակտիվացմամբ: Ստեղծված իրավիճակում չեզոք քաղաքականության պահպանումը քննադատության էր արժանանում ոչ միայն Մերձավոր Արևելքի պետությունների և Արևմուտքի կողմից, այլև հենց Չինաստանի ներսում: Սակայն Չինաստանը, ի վերջո, կարողացավ համապատասխան փոփոխություններ մտցնել իր քաղաքականության մեջ և ավելի խորացնել հարաբերությունները տարածաշրջանի պետությունների հետ՝ սկսելով նաև ծավալել տարածաշրջանային անվտանգության ապահովմանն ուղղված գործողություններ:

Տարածաշրջանի պետությունների համար Չինաստանը առաջ է մղում այն գաղափարը, որ զարգացումն ավելի կարևոր է, քան ժողովրդավարությունը՝ պնդելով, որ տարածաշրջանային անկայունության հիմնական պատճառներն են տնտեսական լճացումը, գործազրկության բարձր մակարդակը, թույլ ենթակառուցվածքները, բնակչության արագ աճը և ուղեղների արտահոսքը, այլ ոչ՝ ժողովրդավարական արժեքների բացակայությունը: Հետևաբար, չնայած Մոսկվան և Արևմուտքը մեծ դերակատարություն ունեն Իրաքի, Լիբանանի, Լիբիայի, Պաղեստինի, Սիրիայի և Եմենի հակամարտություններում, սակայն կարելի է ենթադրել, որ Պեկինին կհաջողվի տարածաշրջանի պետությունների հետ խորացնել հարաբերությունները, երբ նրանք անցնեն հետպատերազմյան վերակառուցմանը[28]:

Այսպիսով՝ ՄԱ տարածաշրջանում Չինաստանի աշխարհաքաղաքական դերակատարությունը կապված է տարածաշրջանի պետությունների հետ էներգետիկ համագործակցության խորացման և ներդրումների ծավալների հետ: Հիմնական առանձնահատկությունն այն է, որ տարածաշրջանում չինական ներդրումների ծավալների և էներգետիկ նախաձեռնությունների մասշտաբների մեծացմանը զուգահեռ՝ մեծանում է նաև Չինաստանի քաղաքական ազդեցությունը: Տարածաշրջանում Չինաստանի փափուկ ուժը դրսևորվում է քաղաքական չեզոքությամբ, պետությունների հետ էներգետիկ համագործակցության խորացմամբ և ներդրումային ոլորտների բազմազանեցմամբ: Այս պարագայում էներգետիկ աղբյուրների բազմազանեցումը և էներգետիկ համագործակցության ընդլայնումը ոչ

[28] **Sun D.,** նույն տեղում:

միայն ազատում են Չինատանին ընդամենը մի քանի էներգետիկ աղբյուրներից կախված լինելու վտանգից, այլև ծառայում են որպես ՄԱ տարածաշրջանում Չինաստանի քաղաքական ազդեցության մեծացման միջոց։ Մեծածավալ ներդրումները, տնտեսապես փոխշահավետ պայմանները և գաղափարական քարոզչության բացակայությունը ՄԱ տարածաշրջանի պետությունների համար Չինաստանը դարձնում են ավելի գրավիչ ու վստահելի գործընկեր, քան ԱՄՆ-ը։

Չինաստանի և ԱՄՆ-ի շահերի բախումը ՄԱ տարածաշրջանում

Չինաստանի առաջարկած զարգացման մոդելը հակասում է ամերիկյան ժողովրդավարական զարգացման մոդելին։ Հետևաբար Մերձավոր Արևելքում Չինաստանի զգուշավորությունը նաև պայմանավորված է նրանով, որ ԱՄՆ-ի ազդեցությունը զգալի է տարածաշրջանում։ Չինաստանի ակտիվության դրսևորումները հիմնականում հանդիպում են ԱՄՆ-ի դիմադրությանը և բացասական ազդեցություն են ունենում չին-ամերիկյան հարաբերությունների վրա։ Սակայն ԱՄՆ նախագահ Թրամփի օրոք ամերիկյան քաղաքականությունը տարածաշրջանում բավական պասիվացել էր, ինչը հնարավորություն է տալիս Չինաստանին ընդարձակել սեփական ազդեցության շրջանակները տարածաշրջանում։

Չինաստանը տարածաշրջանում հիմնականում ունի առևտրի, ներդրումների և էներգետիկ համագործակցության հետ կապված աշխարհատնտեսական հետաքրքրություններ, իսկ Չինաստանի աշխարհաքաղաքական դերակատարության մեծացումը տնտեսական համագործակցության խորացման արդյունք է, մինչդեռ ԱՄՆ-ի հետաքրքրությունները այդ ամենին զուգահեռ ավելի աշխարհա-քաղաքական են և կապված են տարածաշրջանային գերիշխանության պահպանման, հակաահաբեկչական գաղափարների քարոզչության և մերձավորարևելյան դաշնակիցների պաշտպանության հետ։ Կողմերի շահերը և հետաքրքրությունները կարող են համադրելի լինել։ Հետևաբար Չինաստանի ազդեցության մեծացումը տարածաշրջանում ամենևին չի նշանակում ԱՄՆ-ի դուրս մղում, և համագործակցության

ճիշտ եզրեր գտնելու դեպքում ԱՄՆ-ը և ՉԺՀ-ը կարող են Մերձավոր Արևելքում ձևավորել փոխլրացնող համագործակցություն[29]: Ավելին, չինական ներդրումների համար բարենպաստ պայմաններ ստեղծելու և տարածաշրջանը կայունացնելու համար ԱՄՆ-ի ներկայությունը տարածաշրջանում կարևոր է: Հետևաբար անհրաժեշտ է նաև Ռուսաստանի, Չինաստանի և ԱՄՆ-ի միջև համագործակցության ռազմավարական ծրագրի մշակումը[30]:

Չնայած երկու պետությունների շահերը կարող են համատեղելի լինել, սակայն ԱՄՆ-ը, հատկապես Դ. Թրամփի վարչակազմի օրոք, Չինաստանը դիտարկում է որպես սպառնալիք սեփական ազդեցությանը ՄԱ տարածաշրջանում[31]: Դրա մասին են վկայում Չինաստան-ԱՄՆ հարաբերությունների լարվածության մեծացումը, ԱՄՆ-ի ընդունած հակաչինական օրինագծերը, ինչպես նաև ակտիվ հակաչինական քարոզչությունը միջազգային բոլոր հնարավոր հարթակներում: Միջազգային հանրության առջև Չինաստանի՝ որպես հարուստ և խաղաղասեր պետության համբավը վարկաբեկելու նպատակով ԱՄՆ-ը և արևմտյան պետությունները հիմնականում շահարկում են հետևյալ թեմաները՝ կորոնավիրուսի՝ Չինաստանից տարածումը, Սինձյան նահանգի ույղուր մուսուլման-ների խնդիրը, Հոնկոնգում քաղաքական ազատության սահմանա-փակման հետ կապված իրադարձությունները և չինական տեխնիկայի միջոցով գաղտնի տեղեկատվության արտահոսքը[32]:

Ամերիկյան լրատվամիջոցներում կորոնավիրուսը ներկայաց-վում է որպես Չինաստանի ստեղծած և միտումնավոր տարածած վիրուս[33], իսկ ԱՄՆ նախագահի հռետորաբանության անբաժան մասն է

---

[29] **Xu R., Sun D.,** Sino-American Relations in the Middle East: Towards A Complementary Partnership? *Asian Journal of Middle Eastern and Islamic Studies,* 2019, **13,** 2, 143-161.

[30] **Marketos T. N.,** նույն տեղում:

[31] China and Russia: The New Threats to Middle East Security and Stability, United States Department of State, 2020, https://www.state.gov/china-and-russia-the-new-threats-to-middle-east-security-and-stability/, (26.09.2020).

[32] **O'Flaherty K.,** Huawei Security Scandal: Everything You Need to Know. Forbes, 2019, https://www.forbes.com/sites/kateoflahertyuk/2019/02/26/huawei-security-scandal-everything-you-need-to-know/#573d889673a5, (26.09.2020).

[33] **Wintour P.,** Trump attacks China over Covid "plague" as Xi urges collaboration in virus fight. The Guardian, 2020,

դարձել «Չինաստանի վիրուս» եզրը[34]: Հոնկոնգում քաղաքական իրավիճակը և Չինաստանի գործողությունները որակվում են որպես սպառնալիք ժողովրդավարությանը[35] և մարդու իրավունքներին [36]: Իսկ Սինծյան նահանգում գործող մասնագիտական կրթության և ուսուցման կենտրոնները ներկայացվում են որպես վերադաստիարակչական ճամբարներ, որտեղ ույղուրները, որոշ այլ ուսուլման փոքրամասնությունների հետ մեկտեղ, ստիպողաբար են տարվում և պետական մասշտաբով խախտվում են վերջիններիս իրավունքները[37]: Ույղուրների նկատմամբ չինական քաղաքականությունը նաև որոշ արևմտյան աղբյուրներ որակում են որպես «տեխնոլոգիապես բարդ ցեղասպանություն»[38], իսկ մուսուլման առաջնորդների աջակցությունը Չինաստանին ներկայացվում է որպես դավաճանություն՝ նշելով, որ Թրամփի վարչակազմը ճամբարներում միլիոնների համար ավելին է արել, քան իսլամական ցանկացած առաջնորդ[39]:

Չնայած Չինաստանը հնարավորինս չեզոք դիրք է գրավում տարածաշրջանային խնդիրներում, սակայն տարածաշրջանի պետությունների հետ տնտեսական համագործակցությունը աստիճա-

---

https://www.theguardian.com/world/2020/sep/22/trump-china-xi-beijing-united-nations, (26.09.2020).

[34] **Gladstone R.,** Trump Demands U.N. Hold China to Account for Coronavirus Pandemic, The New York Times, 2020, https://www.nytimes.com/2020/09/22/world/americas/UN-Trump-Xi-China-coronavirus.html, (26.09.2020).

[35] **Rasmussen A. F.,** Hong Kong showed China is a threat to democracy. Now Europe must defend Taiwan | Anders Fogh Rasmussen. The Guardian. 2019, https://www.theguardian.com/commentisfree/2019/jul/16/hong-kong-china-democracy-europe-taiwan-beijing-eu, (26.09.2020).

[36] **Watson I. R. W. A. V. C.,** Hong Kong was once a safe haven from China. Now activists are fleeing the city by boat to Taiwan. *CNN.* 2020, https://edition.cnn.com/2020/09/14/asia/hong-kong-taiwan-boat-dst-intl-hnk/index.html, (26.09.2020).

[37] **Graham-Harrison E.,** China has built 380 internment camps in Xinjiang, study finds. *The Guardian.* 2020, https://www.theguardian.com/world/2020/sep/24/china-has-built-380-internment-camps-in-xinjiang-study-finds, (26.09.2020).

[38] **Asat R.,** The United States Should Formally Recognize Genocide in Xinjiang. *Foreign Policy.* 2020, https://foreignpolicy.com/2020/07/15/uighur-genocide-xinjiang-china-surveillance-sterilization/, (26.09.2020).

[39] **Ibrahim A.,** Muslim Leaders Are Betraying the Uighurs. *Foreign Policy.* 2020, https://foreignpolicy.com/2019/07/08/muslim-leaders-are-betraying-the-uighurs/, (26.09.2020).

նաբար հանգեցնում է քաղաքական համագործակցության խորացմանը և հետևաբար նաև Չինաստանի ազդեցության մեծացմանը տարածաշրջանում: Վերոնշյալ հանգամանքը ԱՄՆ-ի կողմից դիտվում է որպես ուղիղ սպառնալիք իր դերակատարությանը տարածաշրջանում: Դա է պատճառը, որ ԱՄՆ-ը և Արևմուտքի պետությունները փորձում են հակաչինական քարոզչության միջոցով խոչընդոտել Չինաստանի առաջխաղացմանը տարածաշրջանում:

Ռուսաստան-Չինաստան փոխհարաբերությունները

Առաջին հայացքից Չինաստանի՝ ՄԱ պետությունների հետ էներգետիկ համագործակցության խորացումը կարող է գնահատվել որպես մեծ հարված Ռուսաստանի և Չինաստանի հարաբերություններին (դա հիմնականում վերաբերում է պետությունների էներգետիկ համագործակցությանը), սակայն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերոնշյալը ոչ մի կերպ չի նպաստում պետությունների միջև լարվածության առաջացմանը: Չինաստանը արդյունաբերող հսկա է, որի էներգետիկ պահանջները տարեցտարի մեծանում են, և վերջինիս տնտեսության զարգացումը ուղիղ կապ ունի էներգետիկ պահանջների բավարարման հետ: Չինաստանը ամեն կերպ փորձում է բազմազանեցնել էներգետիկ պաշարների ներմուծման աղբյուրները, որպեսզի պետության տնտեսության զարգացումը կախում չունենա մեկ կամ մի քանի աղբյուրներից:

Միաժամանակ, Ռուսաստանը շահագրգռված է բազմազանեցնել վաճառքի շուկաները, որպեսզի նվազեցնի իր կախվածությունը եվրոպական էներգետիկ շուկայից: Իր հերթին Չինաստանը փորձում է մեծացնել բնական գազի ներմուծումը, քանի որ ձգտում է նվազեցնել ածուխի մասնաբաժինը էլեկտրաէներգիայի արտադրության մեջ: Կարևոր գործոն է նաև այն, որ Մոսկվան և Պեկինը գրեթե միաժամանակ հանդիպեցին ԱՄՆ-ի դիմակայությանը, ինչը դարձավ մերձեցման լրացուցիչ խթան: Պատահական չէ, որ Մոսկվայի և Պեկինի միջև էներգետիկ երկխոսությունը ակտիվացավ 2014 թվականին, որը ուղեկցվեց Ուկրաինայի հարավ-արևելքում քաղաքական ճգնաժամով և արևմտյան երկրների պատժամիջոցներով: Թեև Չինաստանի

կախվածությունը այլ էներգամատակարարներից դեռևս մեծ է (2018թ. ՉԺՀ-ը օտարերկրյա գործընկերներից է ձեռք բերել ներմուծած նավթի 69,8%-ը և բնական գազի՝ 45.3%-ը), չին-ռուսական էներգետիկ համագործակցությունը տարեցտարի խորանում է (2018թ. Ռուսաստանը 20%-ով ավելի շատ նավթ մատակարարեց Չինաստանին, քան նախորդ տարվա ընթացքում): Ռուսաստանը նաև ածխի խոշորագույն մատակարարն է Չինաստանի համար՝ մատակարարելով երկրում սպառվող ածխի 10%-ը: Մոսկվայի և Պեկինի միջև էներգետիկ համագործակցությունը կայուն գործոն է, որը կարող է հետագայում որոշել տարածաշրջանային էներգետիկ իրավիճակը[40]:

Ռուսաստանի նավթի մատակարարումը՝ Մերձավոր Արևելքի համեմատությամբ, Չինաստանում համարվում է ռազմավարական առումով ավելի անվտանգ և ծախսարդյունավետ, քանի որ մի շարք առավելություններ ունի ՄԱ պետությունների նավթի նկատմամբ[41]՝

- Ռուսաստանի նավթահանքերը կապված են Եվրոպայի և Ասիայի նավթավերամշակման գործարանների հետ, և նավթային ընկերությունները երկարաժամկետ պայմանագրեր ունեն նրանց հետ;
- Ռուսական ռուբլիով վաճառքը (ի տարբերություն ՄԱ պետությունների, որոնք վաճառում են նավթը ԱՄՆ դոլարով): Հետևաբար ռուսական նավթի գինը ուղղակիորեն կապված չէ ԱՄՆ դոլարի արժեքի տատանումների հետ:

ՄԱ տարածաշրջանում Ռուսաստանի և Չինաստանի շահերը հիմնականում փոխլրացնող են: Չինաստանը տարածաշրջանում հիմնականում ունի էներգետիկ պաշարների ապահովման, ներդրումների հետ կապված և այլ տնտեսական շահեր: Հետևաբար Պեկինը շահագրգռված է աջակցել Ռուսաստանի՝ այս տարածաշրջանում իրականացվող այն քաղաքական գործողություններին, որոնք ուղղված են տարածաշրջանի կայունացմանը: Իսկ Ռուսաստանը տնտեսական շահերի (էներգետիկ համագործակցություն, զենքի

---

[40] **Нежданов В.,** Энергетическое сближение России и Китая: Взгляд из Пекина, *Евразия Эксперт*, 2019, http://eurasia.expert/energeticheskoe-sblizhenie-rossii-i-kitaya-vzglyad-iz-pekina/, (30.01.2020).

[41] **Rasidi Y.,** Here's Why China Prefers Russian Oil, Inside Over, https://www.insideover.com/economy/heres-why-china-prefers-russian-oil.html, (26.08.2020).

վաճառք և այլն) հետ մեկտեղ տարածաշրջանում շարժվում է քաղաքական նկատառումներից ելնելով: Ռուս-չինական համագործակցությունը հիմնականում դրական արձագանք է ստացել տարածաշրջանի պետությունների կողմից, որոնք իրենց հերթին ողջունել են չինական ներդրումները և ռուսական դիվանագիտությունը[42]:

Էներգետիկ համագործակցությունը վկայում է պետությունների փոխադարձ վստահության և կայուն հարաբերությունների մասին: Վերջինիս կարելի է նաև հանգել՝ ուսումնասիրելով միջազգային ասպարեզում ՉԺՀ-ի և ՌԴ-ի գործողությունները, որոնք հիմնականում փոխլրացնող են: Չին-ռուսական հարաբերությունները նաև վկայում են, որ անկախ ՄԱ պետությունների հետ հարաբերությունների զարգացումից, երկու պետությունների միջև հարաբերությունները շարունակելու են խորանալ: Չնայած ռազմավարական առումով ռուսական չմշակված նավթը առավել անվտանգ և ծախսարդյունավետ է Չինաստանի համար, սակայն վերջինս ակտիվորեն ընդլայնում է իր էներգետիկ աղբյուրները՝ ներառելով ՄԱ տարածաշրջանի որքան հնարավոր է շատ պետություններ: Վերջինս ևս վկայում է, որ Չինաստանի էներգետիկ քաղաքականությունը ՄԱ տարածաշրջանում ոչ միայն բխում է ՉԺՀ-ի տնտեսական շահերից, այլև՝ աշխարհաքաղաքական:

Եզրակացություն

Մերձավոր Արևելքում Չինաստանի էներգետիկ քաղաքականության և աշխարհաքաղաքական դերակատարության համադրության առանձնահատկությունների արդյունքների ու հեռանկարների վերլուծությունը վկայում է, որ

1. Մերձավոր Արևելքում Չինաստանի համար առաջնային է տնտեսական համագործակցությունը, հատկապես՝ էնեգետիկայի ոլորտում: Չինաստանը շահագրգռված է էներգետիկ համագործակցություն հաստատել ՄԱ տարածաշրջանի հնարավորինս շատ

[42] **Siddi M., Kaczmarski M.,** Russia and China in the Middle East Playing their Best Cards, FIIA Briefing Paper, 2019, pp. 1-8.

պետությունների հետ, քանի որ դրա շնորհիվ վերջինս կկարողանա խուսափել մեկ կամ մի քանի պետություններից էներգետիկ կախվածություն ունենալուց: Չինաստանի տնտեսության կայուն զարգացումը պայմանավորված է տարեցտարի աճող էներգետիկ պահանջների բավարարմամբ, հետևաբար էներգետիկ ռեսուրսների այլընտրանքային աղբյուրներ չունենալու դեպքում Չինաստանի տնտեսությունը կարող է անելանելի իրավիճակում հայտնվել:

2. Չինաստանի աշխարհաքաղաքական դերակատարությունը ՄԱ տարածաշրջանում աճեց «Արաբական գարնան» հետ կապված իրադարձություններից հետո, երբ փոխվեց Չինաստանի քաղաքականությունը տարածաշրջանի պետությունների նկատմամբ, ամրապնդվեցին դիվանագիտական կապերը և խորացվեց տնտեսական համագործակցությունը: Չինաստանի որդեգրած քաղաքականությունը ՄԱ տարածաշրջանում հանդիպում է մի շարք մարտահրավերների, որոնց մի մասը կապված է ՉԺՀ-ի՝ տարածաշրջանում կամ ընդհանուր առմամբ միջազգային հարթակում հեղինակության վտանգման և դերի նվազման հավանականության հետ, իսկ մյուս մասը՝ սեփական տարածքային ամբողջականության պահպանման և այլ պետությունների կողմից Չինաստանի ներքին գործերին միջամտելու հետ: Տարածաշրջանում Չինաստանի աշխարհաքաղաքական ազդեցության ընդլայնմանը հիմնականում խոչընդոտում է ԱՄՆ-ը, որը կարևոր դերակատարություն ունի ՉԺՀ-ը վարկաբեկող տեղեկատվության տարածման գործընթացում:

3. ՄԱ տարածաշրջանում Չինաստանի էներգետիկ քաղաքականության և աշխարհաքաղաքական դերակատարության համադրության հիմնական առանձնահատկությունն այն է, որ դրանք փոխշաղկապված են: Վերլուծության արդյունքում կարելի է հանգել այն եզրահանգմանը, որ Չինաստանի էներգետիկ քաղաքականության մշակման ժամանակ ոչ միայն հաշվի են առնվում պետության տնտեսական, այլև՝ աշխարհաքաղաքական շահերը: Չինաստանի՝ ՄԱ տարածաշրջանի պետությունների հետ էներգետիկ համագործակցությունը զգալի ազդեցություն ունի պետությունների միջև քաղաքական համագործակցության խորացման վրա. տնտեսական սերտ կապերը, հսկայական ներդրումները և երկկողմանի շահերը

դրդում են ՄԱ պետություններին միջազգային հարթակում տարաբնույթ քաղաքական հարցերի ծագման դեպքում աջակցել Չինաստանին, իսկ Չինաստանի և Ռուսաստանի համագործակցությունը հիմնականում դրական արձագանք է ստացել տարածաշրջանի պետությունների կողմից: Կարելի է եզրակացնել, որ չինական ներդրումների և Մերձավոր Արևելքի պետությունների հետ էներգետիկ համագործակցության ծավալների աճի դինամիկան ուղիղ համեմատական է տարածաշրջանում Չինաստանի աշխարհաքաղաքական դերակատարության մեծացմանը:

The Characteristics of China's Energy Policy and Geopolitical Role in Middle East

LUSINE TOROSYAN
Center of Perspective Researches nd Initiatives, Armenia

The article examines China's energy policy in the Middle East from geopolitical perspective. It considers the political factors, influencing the development of China's energy policy, the dynamics of energy cooperation between China and Middle Eastern countries, as well as the impact of the latter on political cooperation in the international arena (e.g. political problems in the Middle Eastern region, the Xinjiang problem concerning Uyghurs etc.). The article also discusses the impact of the above-mentioned on China-Russia energy cooperation and China-US relations. The study reveals that the goal of China's energy cooperation is not merely to meet China's vast energy needs; China's energy policy is driven by several geopolitical factors, along with economic interests. As the US influence weakened in the region, China is gradually increasing its influence in the Middle East through energy cooperation, investments and economic initiatives.